ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

12 նոյեմբերի 2014 թ. թիվ 8/1709/

20. ՀՀ ԳԱԱ իսկական անդամների / ակադեմիկոսների/ և թղթակից անդամների ընտրությունների կանոնակարգի հաստատում

ՀՀ ԳԱԱ Նախագահությունը որոշեց.

Հաստատել ՀՀ ԳԱԱ իսկական անդամների / ակադեմիկոսների/ և թղթակից անդամների ընտրությունների կանոնակարգը, հաշվի առնելով արված դիտողություններն ու առաջարկությունները /կցվում է/:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ռ.Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հաստատված է 2014 թ. նոյեմբերի 12-ի թիվ
8/1709/ ՀՀ ԳԱԱ Նախագահության որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ/ԱԿԱԴԵՄԻԿՈՍՆԵՐԻ/ ԵՎ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (այսուհետև՝ ՀՀ ԳԱԱ) անդամներ են հանդիսանում ակադեմիկոսները, թղթակից անդամները, արտասահմանյան և պատվավոր անդամները:

2. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս ընտրվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող այն գիտնականները, որոնք գիտությունը հարստացրել են առաջնակարգ գիտական նշանակություն ունեցող և միջազգային ճանաչում ստացած գիտական աշխատանքներով:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ ընտրվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող այն գիտնականները, որոնք գիտությունը հարստացրել են առաջնակարգ գիտական նշանակություն ունեցող գիտական աշխատանքներով:

3. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների ընտրությունները, որպես կանոն, անցկացվում են ոչ ուշ, քան երեք տարին մեկ անգամ: Ընտրությունների ժամկետը, մասնագիտությունների անվանումը և թափուր տեղերի թվաքանակն՝ ըստ առանձին մասնագիտությունների, առաջարկում է ՀՀ ԳԱԱ նախագահությունը և հաստատում է ՀՀ Կառավարությունը:

4. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների ընտրություններն անց են կացվում ՀՀ ԳԱԱ Կանոնադրության և սույն կանոնակարգին համապատասխան:

5. Ընտրությունների անցկացման մասին ՀՀ ԳԱԱ նախագահության հայտարարությունը հրապարակվում է մամուլում ոչ ուշ, քան ընտրությունների անցկացման օրվանից երկու ամիս առաջ:

6. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների թեկնածուների առաջադրման իրավունքը վերապահվում է ՀՀ ԳԱԱ անդամներին (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսները իրավունք ունեն առաջադրելու ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների թեկնածուներին, իսկ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամները՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամիերի թեկնածուներին), պետական գիտական կազմակերպություններին, պետական բարձրագույն ուսումնական հաստատություններին, ինչպես նաև պետության մասնակցությամբ գործող գիտահետազոտական կազմակերպություններին: Թեկնածուների առաջադրումը կատարվում է գիտական և գիտատեխնիկական խորհուրդների նիստերում՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

7. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների թեկնածուների առաջադրումները համապատասխան հիմնավորմամբ գրավոր ներկայացվում են ՀՀ ԳԱԱ կադրերի բաժին ընտրությունների անցկացման մասին հայտարարության հրապարակումից հետո մեկ ամսվա ընթացքում:

8. Առաջադրված թեկնածուները գրանցվում են թեկնածուի գրավոր համաձայնության դեպքում:

9. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների թեկնածուները կարող ենառաջադրվել և քվեարկվել միայն մեկ մասնագիտության գծով:

10. Այն դեպքում, երբ հայտարարված մասնագիտությունը առնչվում է տարբեր բաժանմունքների հետ, ապա թեկնածուի այս կամ այն բաժանմունքում քվեարկվելու որոշումն ընդունում է ՀՀ ԳԱԱ նախագահությունը:

11. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների առաջադրված և գրանցված թեկնածուների ցուցակը ըստ մասնագիտությունների հրապարակվում է ՀՀ պարբերականներում ոչ ուշ, քան ընտրություններից մեկ ամիս առաջ:

12. ՀՀ ԳԱԱ կադրերի բաժինը թեկնածուների առաջադրման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր հետո գրանցված բոլոր թեկնածուների վերաբերյալ նյութերը հանձնում է ՀՀ ԳԱԱ համապատասխան բաժանմունք:

13. ՀՀ ԳԱԱ բաժանմունքներում ընտրությունների գործընթացը կազմակերպում են ակադեմիկոս-քարտուղարները: Բաժանմունքների բյուրոները հաստատում են փորձագիտական հանձնաժողովների կազմը: Հանձնաժողովները՝ ղեկավարվելով սույն կանոնակարգի 2-րդ կետով, ընդունում են հայտարարված մասնագիտությունների գծով թեկնածուների՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս և թղթակից անդամ առաջադրված անձանց վերաբերյալ իրենց եզրակացությունը:

14. ՀՀ ԳԱԱ բաժանմունքի ընդհանուր ժողովում փորձագիտական հանձնաժողովների նախագահները ներկայացնում են իրենց հանձնաժողովների եզրակացությունները ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս և թղթակից անդամ առաջադրված բոլոր թեկնածուների վերաբերյալ: Քննարկումից հետո փակ, գաղտնի քվեարկությամբ բաժանմունքում անցկացվում են ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների թեկնածուների միաժամանակ ընտրություններ՝ հայտարարված բոլոր մասնագիտությունների գծով:

15. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների թեկնածուների ընտրության ժամանակ բաժանմունքի ընդհանուր ժողովում վճռական ձայնի իրավունք ունեն տվյալ բաժանամունքի ակադեմիկոսները:
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամների թեկնածուների ընտրության ժամանակ բաժանմունքի ընդհանուր ժողովում վճռական ձայնի իրավունք ունեն տվյալ բաժանմունքի ակադեմիկոսները և թղթակից անդամները:

16. Ակադեմիայի այն անդամները, ովքեր երկար տարիներ առանց գործուղման ապրում և աշխատում են արտասահմանում և չեն կատարում իրենց կանոնադրական պարտականությունները, չեն ընդգրկվում ակադեմիայի ընտրություններին մասնակցող ակադեմիայի անդամների ցանկում:

17. Բաժանմունքի ընդհանուր ժողովը իրավազոր է անցկացնել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների թեկնածուների ընտրություններ, եթե քվեարկությանը մասնակցում են տվյալ բաժանմունքի ակադեմիկոսների թվի առնվազն երեք քառորդը:

Բաժանմունքի ընդհանուր ժողովն իրավազոր է անցկացնելու ՀՀ ԳԱԱ թղթակից անդամների թեկնածուների ընտրություններ, եթե քվեարկությանը մասնակցում են տվյալ բաժանմունքի ակադեմիկոսների և թղթակից անդամների թվի առնվազն երեք քառորդը:

18. Քվեարկության համար ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների ցուցակային կազմը հաստատվում է բաժանմունքների բյուրոների որոշմամբ:

19. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների ցուցակային կազմի մեջ չեն մտցվում ՀՀ ԳԱԱ բաժանմունքի այն ակադեմիկոսները և թղթակից անդամները, որոնք ընտրությունների ժամանակ գտնվում են արտասահմանում, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ այն ակադեմիկոսները և թղթակից անդամները, որոնց առողջական վիճակը անհնարին է դարձնում նրանց մասնակցությունը բաժանմունքի ընդհանուր ժողովին:

20.Բաժանմունքների ընդհանուր ժողովներում ընտրված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների թեկնածուների թվաքանակը չպետք է գերազանցի հայտարարված համապատասխան մասնագիտությունների թափուր տեղերի թվաքանակին:

21.Յուրաքանչյուր տեղի համար, եթե երկու և ավելի թեկնածուներ բաժանմունքի ընդհանուր ժողովում ստացել են 2/3 և ավելի ձայն, ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովում քվեարկվում է այն թեկնածուն, որը ստացել է ձայների առավելագույն քանակը:

22. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսի թեկնածու ընտրված են համարվում այն անձինք, որոնք ստացել են առավելագույն թվով ձայներ, բայց ոչ պակաս, քան տվյալ բաժանմունքի ցուցակային կազմում ընդգրկված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների թվի երկու երրորդը:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամի թեկնածու ընտրված են համարվում այն անձինք, որոնք ստացել են առավելագույն թվով ձայներ, բայց ոչ պակաս, քան տվյալ բաժանմունքի ցուցակային կազմում ընդգրկված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների թվի երկու երրորդը:

23. Մրցակցության դեպքում, ըստ անհրաժեշտության, բաժանմունքը կարող է ընտրությունները անցկացնել մինչև երեք փուլ:
ա/ երկրորդ փուլում քվեարկվում են այն թեկնածուները, որոնք առաջին փուլում չեն ընտրվել, բայց ստացել են ձայների 1/3–ից ոչ պակաս,
բ/ եթե առաջին փուլում կան թեկնածուներ, որոնք ստացել են 2/3 կամ ավելի, բայց հավասար ձայներ, երկրորդ փուլում քվեարկության են դրվում միայն նրանց թեկնածությունները,
գ/ երրորդ փուլում քվեարկվում են այն թեկնածուները, որոնք երկրորդ փուլում չեն ընտրվել, բայց ստացել են ձայների կեսից ավելի:

24. Ընտրությունները համարվում են չկայացած, եթե.
ա/ առաջին փուլում հայտարարված մեկ տեղի վրա առաջադրված միակ թեկնածուն չի ստացել բավարար ձայներ;
բ/ մասնակցում են մեկից ավելի թեկնածուներ, և երեք փուլից հետո ոչ ոք չի ընտրվել:

25. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների թեկնածուների ընտրությունների ժամանակ բաժանմունքի ընդհանուր ժողովում քվեաթերթիկների մեջ այբենական կարգով մտցվում են բոլոր գրանցված թեկնածուները:

26. Բաժանմունքի ընդհանուր ժողովում յուրաքանչյուր մասնագիտության գծով հայտարարված թափուր տեղերի համար պատրաստվում է առանձին քվեաթերթիկ:
Քվեաթերթիկում թեկնածուի ազգանվան դիմաց լինում է երկու բառ՝ ՝կողմ՝ և ՝դեմ՝: Եթե քվեաթերթիկում ջնջված են և ՝կողմ՝, և ՝դեմ՝ բառերը, կամ դրանցից ոչ մեկը ջնջված չէ, ապա քվեաթերթիկը համարվում է անվավեր տվյալ թեկնածուի համար: Քվեաթերթիկը համարվում է անվավեր նաև այն դեպքում, եթե կան այլ նշումներ:

27. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների թեկնածուների ընտրությունները անցկացնող և ձայները հաշվող հանձնաժողովի արձանագրությունը հաստատվում է ՀՀ ԳԱԱ բաժանմունքի ընդհանուր ժողովում՝ բաժանմունքի ակադեմիկոսների առնվազն երեք քառորդի առկայության դեպքում:
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամների թեկնածուների ընտրություններն անցկացնող և ձայները հաշվող հանձնաժողովի արձանագրությունը հաստատվում է ՀՀ ԳԱԱ բաժանմունքի ընդհանուր ժողովում՝ բաժանմունքի ակադեմիկոսների և թղթակից անդամների առնվազն երեք քառորդի առկայության դեպքում:

28. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների ընտրություններն անցկացվում են ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովում: ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսները և թղթակից անդամները ընտրվում են ՀՀ ԳԱԱ բաժանմունքների ընդհանուր ժողովներում ընտրված թեկնածուների թվից: Քվեարկության համար ցուցակային կազմը հաստատվում է ՀՀ ԳԱԱ նախագահության որոշմամբ:

29. ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս ընտրելիս վճռական ձայնի իրավունք ունեն ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսները:
ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովում ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ ընտրելիս վճռական ձայնի իրավունք ունեն ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսները և թղթակից անդամները: ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և ՀՀ ԳԱԱ թղթակից անդամների ընտրության քվորումը և քվեարկության կարգը այնպիսին են, ինչպիսին որ բաժանմունքների ընդհանուր ժողովներում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և ՀՀ ԳԱԱ թղթակից անդամների թեկնածուների ընտրության ժամանակ:

30. ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղարները զեկուցում են բաժանմունքներում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների թեկնածուների ընտրության արդյունքների մասին, ներկայացնելով թեկնածուների առաջադրման գիտական հիմնավորումը: Քննարկումից հետո փակ, գաղտնի քվեարկությամբ անց են կացվում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների ընտրությունները:

31. Քվեաթերթիկների մեջ մտցվում են միայն ՀՀ ԳԱԱ բաժանմունքի ընդհանուր ժողովի կողմից ընտրված թեկնածուների անունները՝ այբենական կարգով, նշելով մասնագիտությունը, հայտարարված տեղերին համապատասխան։
Քվեաթերթիկում թեկնածուի ազգանվան դիմաց լինում է երկու բառ՝ ՝կողմ՝ և ՝դեմ՝: Եթե քվեաթերթիկում ջնջված են և ՝կողմ՝, և ՝դեմ՝ բառերը, կամ դրանցից ոչ մեկը ջնջված չէ, ապա քվեաթերթիկը համարվում է անվավեր տվյալ թեկնածուի համար:
Քվեաթերթիկը համարվում է անվավեր նաև այն դեպքում, եթե կան այլ նշումներ:

32. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս ընտրված են համարվում այն անձինք, որոնք ստացել են ցուցակային կազմի մեջ ընդգրկված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների ձայների 2/3–ից ոչ պակաս :
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ ընտրված են համարվում այն անձինք, որոնք ստացել են ցուցակային կազմի մեջ ընդգրկված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների ձայների 2/3–ից ոչ պակաս:

33. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների ընտրություններն անցկացնող և ձայները հաշվող հանձնաժողովի արձանագրությունը հաստատվում է ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովում ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների առնվազն երեք քառորդի առկայության դեպքում:
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամների ընտրություններն անցկացնող և ձայները հաշվող հանձնաժողովի արձանագրությունը հաստատվում է ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովում՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների առնվազն երեք քառորդի առկայության դեպքում:

34. Ընդհանուր ժողովների և հաշվիչ հանձնաժողովների արձանագրությունները քվեաթերթիկների հետ միասին պահվում են ՀՀ ԳԱԱ համապատասխան բաժանմունքներում և նախագահությունում:

35. Սույն կանոնակարգին համապատասխան ընտրված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսները և թղթակից անդամները ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովում իրենց ընտրության օրից օգտվում են ՀՀ ԳԱԱ Կանոնադրությամբ հաստատված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և

թղթակից անդամների իրավունքներից և ստանում են դիպլոմներ և վկայագրեր ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից հաստատված ձևով: